մէճիտ (աղօթատեղի) պարսկական գմբէթով, որի շուրջը զարդարած է արաբական արձանագրութիւնով, որ բացատրում է, թէ այս շինութիւնները կառուցուած են Շիրուան շահ Իբրահիմ Խալիլ ուլլա Ֆէրուխ Եսար օղլուի ձեռքով, որը կառավարում էր Շիրվանը 1462 թ. մինչ 1500 թ. պալատի կառուցանելը նոյնպէս պատկանում է Նորան (1491) ըստ վկայութեան ժողովրդի և երկու շինուածների նմանութեան. ուրիշ ապացոյցներ Նորա վերաբերմամբ չկան։ Երեւի պալատը դատարկուել է Շիրվան շահերի անկումից յետ, կամ թէ աւելի լաւ է ասել, երբ Բագուն նուաճեց Իսմայէլ շահը, որ թշնամի էր այդ ցեղին, և որը նոյն իսկ նոցա գերեզմաններին չխնայեց։

Ցեր. 19—Աշտարակի հարաւային մասի վրայ մնացել է մի միայն հետեւեալ արձանագրութիւնը «Ջայթու—Խուդաբեանդեայի թագաւորութեան ժամանակ». այսինքն Ղուլաղիդայի թագաւոր Օլթէյիտի ժամանակ, որը թագաւորում էր Պարսկաստանում 1304 թ. մինչ 1316 թ։

Բագուն գտնւում է ընդ աստիճանաւ 40°21, 26″ с. ш. и 67°30′ в. д. отъ Ферро.

Թարգմանութիւն յարգոյ վարժապետ Գարրիէլի Պողոսեանց։

Կենսագրական տեղեկութիւններ Բագուայ խանների տոհմական ծագման մասին, որոնք հիմնուած են ծերունիների հաղորդած աւանդութիւնների, պատմական արձանագրների և մասամբ այն նիւթերի վրայ, որ կազմել է Բուտկովը Կովկասի պատմութիւնը գրելիս։

Բագուայ գաւառի բնիկ տիրապետողները, ինչպէս երեւում է համանուն քաղաքում գտնուող Շահի արքունիքի և այլ նշանա-